Հավելված թիվ 3
Ծառայությունների կատարման մասին «08» «01» 2026թ.
կնքված թիվ 26-0012Պ պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Իսակովի 24, հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների
մատուցման, թույլտվությունների
և լիցենզավորման վարչություն
ՀՀ, ք. Երևան, Իսակովի 9, հեռ.՝ 011-54-69-14
ՀՀ՝ 900011042471
ՀՎՀՀ՝ 02882913

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

14.01.2026թ. **ք. Երևան**

Պատվիրատուն՝ ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչությունը, ի դեմս՝ վարչության պետ Ա.Թևոսյանի և Կատարողը՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ն, ի դեմս՝ տնօրենի ժ/պ Կ.Մխիթարյանի (փորձաքննությունը կատարող փորձագետներ՝ Մ.Ասլիկյան, Հ.Սիմոնյան և Ա.Բաղդասարյան), հիմք ընդունելով 08.01.2026թ.-ին ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի հետ կնքված 26-0012Պ պայմանագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին՝

պայմանագրի շրջանակներում կատարողը 08.01.2026թ.-ից մինչև 14.01.2026թ. ին ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ աշխատանքները (ծառայության մատուցումը).

Կատարված աշխատանքների (մատուցված ծառայության) համառոտ նկարագիրը *(անվանումն ըստ փորձաքննության /հետազոտության/ յուրաքանչյուր տեսակի /կոդի/ և ենթատեսակի /կոդի/)*	**Կատարված (մատուցված ծառայության ծավալում ներառված) աշխատանքների յուրաքանչյուր տեսակի ենթատեսակի քանակական ցուցանիշը** *(միավորների քանակը)*	**Կատարված (մատուցված ծառայության ծավալում ներառված) աշխատանքների ըստ դասակարգման 1 միավորի գինը** *(ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ)*	**Աշխատանքների կատարման (ծառայության մատուցման) ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը** *(ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ)*	**Պայմանագրի համարը**
09 - նյութագիտական փորձաքննություն (09-02)	1	72 000	08.01.2026թ.-14.01.2026թ.	72 000	№26-0012Պ
09 - նյութագիտական փորձաքննություն (09-04)	3	36 000		108 000	
06 - հետքաբանական փորձաքննություն (06-03)	2	72 000		144 000	
03 - փաստաթղթաբանական փորձաքննություն (03-01)	2	72 000		144 000	
Ընդամենը				468 000	

Վերոնշյալ աշխատանքների կատարման (ծառայության մատուցման) վերաբերյալ հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը (ծառայությունը) հանձնեց

Տնօրենի ժ/պ՝ _____ Կ.Մխիթարյանը

Աշխատանքը (ծառայությունը) ընդունեց

Պատվիրատու՝ _____ Ա.Թևոսյանը

Կատ.՝
Նյութագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ Մ.Ասլիկյան
Հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ Ա.Ղանդիլյան
Փաստաթղթաբանական փորձաքննությունների բաժնի պետ Ա.Բաղդասարյան
հեռ. 77-77-10 (+115, 119, 131)

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 26-0012Պ

ք.Երևան «08» հունվարի 2026թ.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ի դեմս՝ տնօրենի ժ/պ Կ.Մխիթարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մի կողմից, և **ՀՀ ներքին գործերի նախարարությունը,** ի դեմս՝ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մյուս կողմից (այսուհետ՝ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայության բնութագրին համապատասխանող փորձաքննություն և տրամադրել փորձագետի եզրակացություն /հաշվետվություն/ (այսուհետ նաև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վճարել դրա համար Պայմանագրով սահմանված կարգով և չափով:

1.2. Փորձաքննությունն (հետազոտությունը, փորձարկումը, գնահատումը) իրականացվում է հետևյալ տեխնիկական առաջադրանքը կատարելու (առաջադրված հարցերը պարզաբանելու) համար.

Հարց. Պարզել արդյո՞ք մատակարարող «ՁՆԱԿ ՍՏԱՆԴԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվող մեկ զույգ (ուղղանկյուն-քառակուսի) «37 PH 599» և մեկ հատ «803 AC» հաշվառման համարանիշերի՝

1. նմուշները համապատասխանում են ՀՍՏ 110-2014 Հայաստանի ազգային ստանդարտի 5.7 կետի պահանջներին, այն է. «Համարանիշերը պետք է կայուն լինեն վառելիքային նյութերի նկատմամբ: Վառելիքային խառնուրդի մեջ, որը կազմված է 70 % հեպտանից և 30 % տոլուոլից, 1 րոպե ժամանակով ընկղմում են համարանիշի նմուշը՝ տառերով և թվանշաններով: Փորձարկումից հետո համարանիշի նմուշի վրա չպետք է լինեն դրա արդյունավետ աշխատանքի վրա ազդող քայքայման տեսանելի հետքեր»: Միաժամանակ նշել փորձարկման արդյունքում առաջանում են արդյո՞ք քայքայման տեսանելի հետքեր, եթե այո, ապա դրանք կարո՞ղ են ազդել դրանց արդյունավետ աշխատանքի վրա,

2. նմուշները պատրաստված են բարձրորակ ալյումինից (ալյումինի պարունակությունը ոչ պակաս 90%),

3. նմուշների լուսանդրադարձիչ շերտը կայուն է արտաքին ազդակների նկատմամբ և ապահովում է սառը և տաք մշակման հնարավորություն,

4. նմուշների մակերեսները մշակված են դրոշմատպման եղանակով, առկա են «AM» մակագրություն, դրանց տառաթվային համակցությունը դրոշմատպված է 1.4մմ բարձրությամբ և պատված հատուկ թաղանթով՝ տաք դրոշմատպման եղանակով,

5. նմուշներն ունեն պաշտպանված տարր՝ հոլոգրամ (նկարագիրը՝ առդիր հավելվածով),

6. նմուշներն ունեն հատուկ հոլոգրամային, շտրիխ-կոդային (QR) պաշտպանվածություն,

7. պաշտպանիչ էլեմենտները չեն վնասվում և շերտազատվում քիմիական և ֆիզիկական ազդեցությունից,

8. նմուշները համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան նորմերի հիմնական չափերին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել Պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովել փորձաքննության կատարումը, եզրակացության կազմումը և իրեն տրամադրումը,

2.1.2. հարցում անել Կատարողին Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ՝ առանց խոչընդոտելու վերջինիս աշխատանքին,

2.1.3. Ծառայության մատուցման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հետևանքով, Կատարողի հետ համաձայնեցված ժամկետով, պահանջել երկարաձգելու Պայմանագրի գործողության ժամկետը,

2.1.4. հրաժարվել Պայմանագրի կատարումից և պահանջել վաղաժամկետ լուծել այն՝ միաժամանակ Կատարողին վճարելով պայմանագրի 5.1. կետով սահմանված գնի 50 (հիսուն) տոկոսը, եթե փորձագետն արդեն ձեռնամուխ է եղել Ծառայության մատուցմանը և կատարել է հետազոտելի օբյեկտի հետազոտություն, իսկ հետազոտությունը կատարված չլինելու դեպքում՝ վճարել Կատարողի կողմից փաստացի կատարված ծախսերը,

2.1.5. Կատարողից պահանջել պատշաճ կերպով կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. տրամադրել փորձաքննության համար անհրաժեշտ հետազոտելի օբյեկտը՝ ըստ անհրաժեշտության ձեռնարկելով Կատարողի անվտանգությունն ապահովող համապատասխան միջոցներ,

2.2.2. չմիջամտել Ծառայության մատուցմանը,

2.2.3. Կատարողի գրավոր միջնորդության հիման վրա, հնարավոր սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան միջնորդությունը ստանալու օրվանից սկսած 10 (տասը) օրվա ընթացքում, վերջինիս տրամադրել փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ ելակետային տվյալներ պարունակող օբյեկտներ,

2.2.4. ըստ անհրաժեշտության, Կատարողի պահանջով կամ իր նախաձեռնությամբ, մասնակցել Ծառայության մատուցմանը,

2.2.5. ընդունել կազմված եզրակացությունը՝ Պայմանագրով նախատեսված կարգով,

2.2.6. Պայմանագրի 5.1 և 5.2 կետերին համապատասխան Կատարողին վճարել Պայմանագրի գինը,

2.2.7. պատշաճ կերպով կատարելու Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել կատարելու իր կողմից ներկայացված միջնորդության մեջ նշված պահանջը,

2.3.2. Պայմանագրի կատարման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հետևանքով, Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետով, պահանջել երկարաձգելու Պայմանագրի գործողության ժամկետը,

2.3.3. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.2.1. և (կամ) 2.2.3. ենթակետերով նախատեսված պարտավորությունների չկատարման (մասնակի կատարման) դեպքում գրավոր տեղեկացմամբ կասեցնել իր պարտավորության (դրա համապատասխան մասի) կատարումը կամ հրաժարվել Պայմանագրի կատարումից՝ վաղաժամկետ լուծելով այն և պահանջելով վճարել Պայմանագրի գնի 50 (հիսուն) տոկոսը, եթե փորձագետն արդեն ձեռնամուխ է եղել Ծառայության մատուցմանը և կատարել է հետազոտելի օբյեկտի հետազոտություն, իսկ հետազոտությունը կատարված չլինելու դեպքում՝ վճարել Կատարողի կողմից փաստացի կատարված ծախսերը: Կասեցման ժամկետն ավարտվում է կասեցման համար հիմք հանդիսացող պարտավորությունը (պարտավորությունները) Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կատարելու օրը:

2.3.4. Պատվիրատուից պահանջել Պայմանագրի պայմաններին համապատասխան վճարելու Պայմանագրի գինը,

2.3.5. հրաժարվել Պայմանագրի կատարումից և պահանջել վաղաժամկետ լուծել այն՝ Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով,

2.3.6. անհրաժեշտության դեպքում մասնակի վնասել, խախտել հետազոտելի օբյեկտը/-ները/,

2.3.7. Պատվիրատուից պահանջել պատշաճ կերպով կատարելու Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պատվիրատուի կողմից ներկայացված նյութերի հիման վրա, Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցել Ծառայությունը՝ տվյալ ոլորտը կարգավորող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների ու մեթոդների համաձայն,

2.4.2. Ծառայության մատուցմանն ուղղված աշխատանքներն իրականացնել Պատվիրատուի նշած օբյեկտների գտնվելու վայրում, եթե դրանք Կատարողի մոտ տեղափոխելը դժվարին է կամ անհնարին,

2.4.3. Պատվիրատուի հարցման հիման վրա տեղեկացնել նրան Ծառայության մատուցման ընթացքի մասին,

2.4.4. միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) կատարմանը ներգրավել երրորդ անձի,

2.4.5. անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ Պայմանագրով սահմանված ժամկետում Ծառայության կատարումն ավարտին հասցնելուն խոչընդոտող՝ Կատարողից անկախ առաջացած հանգամանքների և դրանց հնարավոր տևողության մասին,

2.4.6. Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու օրվանից սկսած 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված տեխնիկական թերությունները,

2.4.7. Պայմանագրի կապակցությամբ ձեռք բերված տեղեկությունները տրամադրել հետաքննության, նախաքննության մարմիններին, դատարանին կամ այլ մարմիններին՝ միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված գրավոր հարցման կամ պահանջի հիման վրա՝ խստիվ պահպանելով սույն պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ իրեն հայտնի դարձած՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով պաշտպանվող տեղեկությունների գաղտնիությունը՝ ձեռնպահ մնալով դրանց տարածումից, հրապարակումից, երրորդ անձանց որևէ կերպ տրամադրումից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

2.4.8. պատշաճ կերպով կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

3. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ) ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕԲՅԵԿՏՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուն Կատարողին է ներկայացնում փորձաքննության կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ ելակետային տվյալներ պարունակող օբյեկտներ (այսուհետ՝ օբյեկտներ), ինչպես նաև փորձագետին առաջադրված տեխնիկական առաջադրանքը (հարցերը):

3.2. Եթե օբյեկտը (օբյեկտները) Կատարողի մոտ տեղափոխելը դժվարին է կամ անհնարին, Պատվիրատուն ներկայացնում է միայն օբյեկտների ցանկը: Այդ դեպքում Պատվիրատուն օբյեկտը (օբյեկտները) ներկայացնում է դրա (դրանց) գտնվելու վայրում՝ փորձաքննությունը (հետազոտությունը, փորձարկումը, գնահատումը) կատարող փորձագետի (փորձագետների) պահանջով:

3.3. Պայմանագրի թիվ 2 հավելվածով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելուց հետո Կատարողը Պայմանագրի կատարման համար իրեն տրամադրված օբյեկտները եզրակացության հետ միասին հետ է վերադարձնում (հանձնում) Պատվիրատուին (բացառությամբ Պատվիրատուի կողմից հետազոտման համար ներկայացված նմուշները հետ չպահանջելու դեպքերի):

3.4. Եթե փորձաքննության մեթոդիկայի համաձայն հնարավոր է հետազոտվող օբյեկտի (օբյեկտների) բուն հատկանիշի (հատկանիշների) վնասում կամ ոչնչացում և (կամ) դրա

նշանակության կորուստ, ապա փորձաքննությունը (հետազոտությունը, փորձարկումը, գնահատումը) կատարվում է տվյալ հանգամանքը Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո՝ վերջինիս գրավոր թույլտվությամբ: Օբյեկտի (օբյեկտների) վնասման, ոչնչացման կամ դրա նշանակության կորստի չափը նշվում է եզրակացության մեջ, որը չի կարող գերազանցել փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) մեթոդիկայով սահմանված չափը:

4. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքը (առաջադրված հարցը) համարվում է Կատարողին տրամադրված՝ անհրաժեշտ օբյեկտները դիմումով ներկայացվող ցանկով Կատարողին տրամադրելու, իսկ օբյեկտները տեղափոխելու դժվարության կամ հնարավոր չլինելու դեպքում՝ դրանք համապատասխան վայրում փորձագետին (փորձագետներին) տրամադրելու պահից:

4.2. Կատարողը եզրակացությունը հանձնում է Պատվիրատուին պայմանագրի Կողմերի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

4.3. Ծառայության մատուցման ավարտի օր է համարվում փորձաքննության ավարտված լինելու և դրա վերաբերյալ Պատվիրատուին այդ մասին իրազեկելու օրը:

4.4. Պատվիրատուն կամ նրա ներկայացուցիչը ստանում է եզրակացությունը Կատարողից՝ համապատասխան գրանցամատյանում ստորագրությամբ հաստատելով դրանք ստանալու հանգամանքը:

4.5. Ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված, եթե Պատվիրատուն ամբողջ ծավալով ընդունում է Ծառայությունը և ստորագրում Ծառայության հանձնման-ընդունման արձանագրությունը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Ծառայության գինը կազմում է 468000 (չորս հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 78000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Պատվիրատուն Ծառայության գինը վճարում է անկանխիկ, Կատարողի՝ Պայմանագրում նշված գանձապետական դրամային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5.2. Ծառայության գինը որոշվում է այն սկսելուց առաջ Կատարողի կողմից ներկայացված օբյեկտի տեսականու և ծավալների որոշման և հաշվարկի հիման վրա՝ Կատարողի մոտ գործող սակագների (որոնց մասին Պատվիրատուն տեղեկացվում է նախապես) համաձայն՝ ըստ Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայության գնի:

5.3. Կողմերի համաձայնությամբ, Պայմանագրի ստորագրման օրը, Պատվիրատուն կարող է վճարել կանխավճար՝ Ծառայության գնի ոչ պակաս, քան 50 (հիսուն) տոկոսի չափով: Պատվիրատուն Ծառայության գնի չվճարված մասը պարտավորվում է վճարել ոչ ուշ, քան Կողմերի կողմից սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածի համաձայն կազմված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու օրը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև «31» հունվարի 2026թ-ը:

6.2. Եթե Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է Պայմանագրի 2.2.3. կետում նշված միջնորդությունը, ապա Պայմանագրի գործողությունը, միջնորդությունը Պատվիրատուին հանձնելու օրվանից սկսած, համարվում է կասեցված: Կասեցման ժամկետն ավարտվում է միջնորդության մեջ նշված պահանջը (պահանջները) Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կատարելու օրը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ («ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

Պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, նյութերի, այլ միջոցների ձեռքբերման անհնարինությունը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7.2. Այն Կողմը, որի համար ստեղծվել են անհաղթահարելի հանգամանքները, այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի մյուս Կողմին:

7.3. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագրի հավելվածները, փոփոխությունները և լրացումները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.3. Կողմերը պարտավորվում են Պայմանագրի պայմաններից բխող, ինչպես նաև Կողմերի պարտավորությունների կատարման կապակցությամբ ծագած վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ դատական կարգով:

8.4. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ**
ք. Երևան,Նալբանդյան 130	ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
հեռ.՝ (374-11) 54-69-14	հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն,
ՀՀ՝ 900011042471	Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՎՀՀ՝ 02882913	ՀՀ՝ 900018005688
Գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյան	ՀՎՀՀ՝ 01836525
	Տնօրենի ժ/պ Կ.Մխիթարյան

Հավելված թիվ 1
Ծառայությունների մատուցման մասին 08.01.2026թ.
Կնքված թիվ 26-0012Պ Պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԳԻՆԸ

N	Կատարվելիք փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) տեսակը (ենթատեսակը),կոդը	Փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) տեսակի (ենթատեսակի) օբյեկտները	Չափման միավորը (հատ, ժամ և այլն)	Միավորի /հետազոտության/ քանակը	Միավորի գինը՝ առանց ԱԱՀ-ի	Ծառայության գինը (ՀՀ դրամ)
1.	2.	3.	4.	5.	6.	7.
2.	09. Նյութագիտական փորձաքննություն (09-02)	պետհամարա-նիշներ	օբյեկտ	1	60000	60000
	09. Նյութագիտական փորձաքննություն (09-04)			3	30000	90000
	06. Հետքաբանական փորձաքննություն (06-03)			2	60000	120000
	03. Հետքաբանական փորձաքննություն (03-01)			2	60000	120000
3.	Ընդամենը՝					390000
4.	ԱԱՀ՝ 20%					78000
5.	Ընդամենը					468000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան,Նալբանդյան 130
հեռ.՝ (374-11) 54-69-14
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՝ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Գլխավոր քննուղար Ա.Ադիդանյան

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն,
Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ 01836525
Տնօրենի ժ/պ Կ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»
ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

"НАЦИОНАЛЬНОЕ БЮРО ЭКСПЕРТИЗ"
ГНКО

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Հեռ. (37410) 77-77-10
Հեռ./ֆաքս (37410) 77-77-04

0004, г. Ереван, пр. Адмирала Исакова 24
Тел. (37410) 77-77-10
Тел./факс (37410) 77-77-04

Թիվ 26-0012Պ

2026թ. հունվարի «14»

ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ՖԻԴԱՆՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ.՝ հեռ. 011-54-69-14/

ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետ Ա.Թևոսյանի 08.01.2026թ.-ի №7/4 գրության հիման վրա ուղարկվում է կատարված նյութագիտական, հետքաբանական և փաստաթղթաբանական համալիր փորձաքննության 2026թ.-ի հունվարի «14»-ի թիվ 26-0012Պ «Փորձագետի եզրակացություն»-ը՝ տրամադրված մեկ զույգ (ուղղանկյուն-քառակուսի) «37 PH 599» և մեկ հատ «803 AC» (ուղղանկյուն) հաշվառման համարանիշների նմուշների՝ գրությամբ նշված պահանջներին համապատասխանության պարզման վերաբերյալ:

Առդիր՝
1. «Փորձագետի եզրակացություն»-ը՝ «5» թերթից, լուսանկարչական համակարգչային հավելվածը՝ «5» թերթից, հանձնման-ընդունման արձանագրությունը՝ «1» թերթից, հարկային հաշիվը, պայմանագիրը:
2. Վերադարձվող նյութերը՝ փորձաքննության տրամադրված մեկ զույգ (ուղղանկյուն-քառակուսի) «37 PH 599» և մեկ հատ «803 AC» (ուղղանկյուն) հաշվառման համարանիշների նմուշները:

ՀՀ ՆԳՆ ՀԲԾՍԹԼ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՍՏԻՑ N 1
«14» 01 2026

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Կ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Կատ.՝
Նյութագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ Մ.Ասլիկյան
Հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ Ա.Ղանդիլյան
Փաստաթղթաբանական փորձաքննությունների բաժնի պետ Ա.Բաղդասարյան
հեռ. 77-77-10 (+115, 119, 131)

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»
ՊՈԱԿ

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24

Հեռ. 77-77-10 (օպերատոր)
77-77-10 (+115)

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ 26-0012Պ

Ըստ՝ ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետ Ա.Թևոսյանի 08.01.2026թ.-ի №7/4 գրության:

Փորձաքննության տեսակը՝ նյութագիտական, հետքաբանական և փաստաթղթաբանական համալիր:

Փորձաքննության հիմքը՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի հետ 2026թ.-ի հունվարի «08»-ին կնքված N26-0012Պ պայմանագիրը նյութագիտական փորձաքննություն /հետազոտություն/ կատարելու մասին:

Փորձաքննությունը սկսվել է 2026թ.-ի հունվարի «08»-ին:

Փորձաքննությունն ավարտվել է 2026թ.-ի հունվարի «14»-ին:

Փորձագետի եզրակացությունը շարադրված է «9» էջի վրա /5 թերթ/:

Լուսանկարչական համակարգչային հավելվածները բերված են «5» էջի վրա /5 թերթ/:

<u>Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետի մասին</u>

Մուշեղ Արտուրի Ասլիկյան – ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի նյութագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ՝ բարձրագույն կրթությամբ (ֆիզիկա), դատանյութագիտական և գործիքային մեթոդներով փորձաքննություններ կատարելու իրավասությամբ: Դատափորձագիտական աշխատանքի ստաժը՝ 10 տարի:

Հայկ Մարտունիկի Սիմոնյան - ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, բարձրագույն տեխնիկական կրթությամբ, դատահետքաբանական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, փորձագիտական աշխատանքային ստաժը՝ 26 տարի:

Արսեն Սերժիկի Բաղդասարյան - ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փաստաթղթաբանական փորձաքննությունների բաժնի պետ, բարձրագույն իրավաբանական կրթությամբ, փաստաթղթաբանական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, փորձագիտական աշխատանքի ստաժը՝ 18 տարի:

7. Н. П. Майлис "Судебная трасология", издательство "Экзамен", Москва 2003г.
8. Н.А.Соклакова, В.Н.Хрусталев "Криминалистическое исследование материалов документов", Москва, Санкт-Петербург 2005г.
9. В. Е. Ляпичев, Н. Н. Шведова "Технико-криминалистическая экспертиза документов" Учебник, Волгоград: Вогоградская академия МВД России, 2005г.
10. В. Л. Попов "Технико-Криминалистическая экспертиза документов" Юридический институт МИИТа, Москва 2015г.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Արտաքին զննություն

Փորձաքննության է ներկայացվել մեկ զույգ (ուղղանկյուն-քառակուսի) «37 PH 599» և մեկ հատ «803 AC» (ուղղանկյուն) հաշվառման համարանիշներ:

ՆՅՈՒԹԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

/կատարող փորձագետ՝ Մ.Ասլիկյան/

Փորձաքննության ներկայացված մեկ զույգ (ուղղանկյուն-քառակուսի) «37 PH 599» և մեկ հատ «803 AC» (ուղղանկյուն) հաշվառման համարանիշների համապատասխանությունը ներկայացված գրությամբ նշված ՀՍՏ 110-2014 Հայաստանի ազգային ստանդարտի 5.7 կետի պահանջներին պարզելու նպատակով, տվյալ կետի պահանջներին համաձայն՝ պատրաստվեց սենյակային ջերմաստիճանի օրգանական լուծիչների խառնուրդ, հետևյալ ծավալային հարաբերակցությամբ՝ 70% ն-հեպտան և 30% տոլուոլ, որից հետո ներկայացված համարանիշերն ամբողջությամբ ընկղմվեցին դրա մեջ և թողնվեցին այնտեղ մեկ րոպե ժամանակով: Այնուհետև համարանիշները հանվեցին լուծույթից, չորացվեցին սենյակային ջերմաստիճանում և հետազոտվեցին ակնադիտորեն՝ բնական լուսավորության պայմաններում և մանրադիտակի տեսադաշտում («Motic» տիպի մանրադիտակի տեսադաշտում (լույսը՝ արհեստական անդրադարձվող, խոշորացումը՝ 40*)): Հետազոտությունների արդյունքում համարանիշների դիմային մակերևույթների վրա՝ այդ թվում դրանց պաշտպանիչ էլեմենտների հատվածներում, քայքայման տեսանելի հետքեր (ճաքեր, ծալքեր, ուռչած հատվածներ և այլն) ի հայտ չեկան:

Ներկայացված մեկ զույգ (ուղղանկյուն-քառակուսի) «37 PH 599» և մեկ հատ «803 AC» (ուղղանկյուն) հաշվառման համարանիշների մետաղական բաղադրակազմը հետազոտվեց «Niton XL3T-96549» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորի միջոցով (համաձայն հաստատված ՓԱԲ-03/4-Ք/Ը-001 ընթացակարգի):

Ներկայացված հաշվառման համարանիշների դիմերեսները հետազոտվեցին «Motic» տիպի մանրադիտակի տեսադաշտում (լույսը՝ արհեստական անդրադարձվող, խոշորացումը՝ 40*): Հետազոտության արդյունքում պարզվեց, որ դրանց տառաթվային հատվածներում հիմնական լաքածածկույթի վրա առկա է սև գույնի ներկածածկույթ:

ՀՀ ԱՊՊ «ՓՈՐՁԱՐԿՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ» ՊՈՒԿ

կատարված է 31մմ երկարության հատվածում: Համարանիշի վրա առկա «AM» գրառման լայնությունը կազմում է 49,63մմ, իսկ բարձրությունը կազմում է 28,26մմ: Համարանիշում առկա թվերի և տառերի ուռուցիկությունը (բարձրությունը) ընդհանուր մակերեսից կազմում են 1,4մմ:

Հետազոտության ընթացքում համարանիշի վրա առկա վերը նկարագրված չափական տվյալները համեմատվեցին ՀՍՏ 110-2014 «Տեսակ 1»-ին ներկայացվող չափական տվյալների հետ (նկ.№9), ինչի արդյունքում պարզվեց, որ ներկայացված հաշվառման համարանիշի չափական տվյալները հիմնականում համապատասխանում են ՀՍՏ 110-2014 «Տեսակ 1»-ին ներկայացվող պահանջներին, սակայն առկա են տարբերություններ. այն է՝ «AM» գրառումը իր տեղակայությամբ և չափական տվյալներով չի համապատասխանում վերը նշված ստանդարտին(նկ.№11,12):

Հետազոտման է ենթակա ուղանկյունաձև տեսքի «AM 37 PH 599» գրառումներով հաշվառման համարանիշը (նկ.№13):

Համարանիշի դարձերեսը դեղնավուն երանգի է (նկ.№14), որի ստորին ձախակողմյան հատվածում առկա է շրջանաձև տեսքի դաջվածք, որը կարող էր կատարվել արտադրողի կողմից:

Համարանիշի դիմային մակերեսը սպիտակավուն երանգի է, որի վրա սևավուն երանգով կարդացում է «AM 37 PH 599» և արծաթափայլ երանգով «ARMENIA» գրառումները, առկա են նաև Հայաստանի Հանրապետության դրոշը, հոլոգրաֆիկ տարբերանշան և «QR» կոդ: Համարնիշի եզրային հատվածները եզրագծված են սև գուներանգով:

Հաշվառման համարանիշի երկարությունը կազմում է 320մմ, լայնությունը 160մմ, հաստությունը 1,1 մմ: Համարանիշի թվանշանները և տառերը գտնվում են միևնույն մակարդակի վրա՝ այն է. ունեն համաչափ բարձրություններ (նկ.№15,16), որոնք կազմում են 60մմ, լայնությունները՝ թվանշանների կազմում են 30,8մմ, իսկ տառերինը՝ 38մմ: Թվանշանների և տառերի միջև եղած հեռավորությունները համապատասխանաբար միմյանց նկատմամբ կազմում են 8մմ: Համարանիշի վրա առկա դրոշի երկարությունը կազմում է 50մմ, իսկ լայնությունը՝ 25մմ: Դրոշից դեպի վերև գտնվող «ARMENIA» գրառումը կատարված է 31մմ երկարության հատվածում: Համարանիշի վրա առկա «AM» գրառման լայնությունը կազմում է 49,62մմ, իսկ բարձրությունը կազմում է 29,35մմ: Համարանիշում առկա թվերի և տառերի ուռուցիկությունը (բարձրությունը) ընդհանուր մակերեսից կազմում են 1,4մմ: «QR» կոդը համարանիշի լայանական ազատ եզրից գտնվում է 13 մմ հեռավորության վրա, իսկ երկայնական ազատ եզրից 10,5մմ հեռավորության վրա: Հետազոտության ընթացքում պարզվեց նաև, որ հոլոգրամայի ստորին ազատ եզրը «AM»-ի ստորին մակարդակից(հորիզոնական գծից) ավելի ցածր է:

Հետազոտության ընթացքում համարանիշի վրա առկա վերը նկարագրված չափական տվյալները համեմատվեցին ՀՍՏ 110-2014 «Տեսակ 1.1»-ին ներկայացվող չափական տվյալների հետ (նկ.№17), ինչի արդյունքում պարզվեց, որ ներկայացված հաշվառման համարանիշի չափական տվյալները հիմնականում համապատասխանում են ՀՍՏ 110-2014 «Տեսակ 1.1»-ին ներկայացվող պահանջներին, սակայն առկա են տարբերություններ. այն է՝ «AM» գրառումը իր տեղակայությամբ և չափական տվյալներով

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ՊՈՍԿ

ՓԱՍՏԱԹՂԹԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

/կատարող փորձագետ՝ Ա.Բաղդասարյան/

Փորձաքննության են ներկայացվել ուղղանկյուն և քառանկյուն «37 PH 599» գրառումներով հաշվառման համարանիշ, մեկ հատ քառանկյուն «803 AC» գրառումներով հաշվառման համարանիշ և «Հավելված 1» գրառմամբ նկարագրական բնութագիր կազմված երկու թերթից:

Ներկայացված հաշվառման համարանիշների դիմերեսների ձախակողմյան հատվածներում առկա են հոլոգրաֆիկ նշաններ, ՀՀ եռագույն դրոշի պատկերներ, որոնց վերին հատվածներում առկա են «ARMENIA» գրառումները, իսկ ներքևի ձախակողմյան և աջակողմյան անկյունային հատվածներում առկա են շտրիխ-կոդերի «QR» պատկերներ:

Փորձաքննությանը ներկայացված հաշվառման համարանիշների հետազոտությունը կատարվել է MOTIC SMZ 143 մանրադիտակի տեսադաշտում, բնական, արհեստական ուղիղ, թեք ընկնող լույսերի տակ և չափվել էլեկտրոնային չափակարկինով:

Մանրադիտակային հետազոտությամբ պարզվեց, որ հոլոգրամանների վրա առկա օվալաձև պատկերների վերին եզրահատվածներում առկա են «ARMENIA» միկրոգրառումներ, օվալաձև պատկերները միջնահատվածներում բաժանված են, որոնց վերին հատվածներում առկա են «AM» գրառումները, իսկ ներքևի հատվածներում առկա են ՀՀ զինանշանի պատկերները, որոնցից վեր առկա են «ARMENIA» միկրոգրառումներ, իսկ «AM» գրառումների հատվածներում առկա են «ARMENIA» միկրոգրառումներ, որոնք իրենց չափսերով ավելի փոքր են քան մնացած հատվածներում առկա միկրոգրառումները:

Բնական և արհեստական լույսերի տակ, դիտման անկյան փոփոխության դեպքում հոլոգրամանների վրա ի հատ են գալիս տարբեր գուներանգային փոփոխություններով հստակ արտահայտված ՀՀ զինանշանի պատկերները և «AM» գրառումները, հոլոգրամանների չափսերը կազմում են 13մմx75մմ, քառանկյուն՝ «37 PH 599» համարանիշի «Տեսակ 1.1»-ի հոլոգրամայի երկարությունը կազմում է 75,38մմ:

«Հավելված 1»-ում առկա հոլոգրամայի չափսերը կազմում եմ 13մմx75մմ, առկա են «ARMENIA» միկրոգրառումներ, «AM» գրառումներ և ՀՀ զինանշանի պատկերներ, որոնք ըստ բնութագրի, դիտման անկյան փոփոխության դեպքում ունեն հստակ արտահայտված տարբեր գունափոփոխություններ:

Համեմատելով հաշվառման համարանշների վրա առկա հոլոգրամանները «Հավելված 1»-ում առկա տվյալների հետ պարզվեց, որ հոլոգրամանները իրենց չափսային առանձնահատկություններով, պատկերների և միկրոտպագրությունների տեղակայումներով, տարբեր գուներանգային փոփոխություններով համապատասխանում են «Հավելված 1»-ում առկա համապատասխան տվյալների հետ:

Թաքնված «OK» տեքստի և մոխրագույն երևացող հատվածում «OK» պատկերի հետազոտություն չի կատարվել «DyunaKey Filter» սարքի և «Հավելված 1»-ում նշված հատուկ լազերային սարքի բացակայության պատճառով:

Հոլոգրամանների վրա առկա միկրոտպագրությունների չափումներ չեն կատարվել, համապատասխան միկրոնային չափիչների բացակայության պատճառով:

սակայն առկա են տարբերություններ. այն է՝ «AM» գրառումը իր տեղակայությամբ և չափական տվյալներով չեն համապատասխանում վերը նշված ստանդարտին, Հայաստանի Հանրապետության դրոշը իր տեղակայությամբ նույնպես չի համապատասխանում ստանդարտին, «QR» կոդի տեղակայությունը նույնպես չի համապատասխանում ներկայացված ստանդարտին, հոլոգրամայի ստորին ազատ եզրը «AM»-ի մակարդակից ավելի ցածր է, որը նույն պես չի համապատասխանում ստանդարտին:

- «AM 803 AC» հաշվառման համարանիշի չափական տվյալները հիմնականում համապատասխանում են ՀՍ 110-2014 «Տեսակ 9»-ին ներկայացվող պահանջներին, սակայն առկա են տարբերություններ. այն է՝ «AM» գրառումը իր տեղակայությամբ և չափական տվյալներով չեն համապատասխանում վերը նշված ստանդարտին, Հայաստանի Հանրապետության դրոշը իր տեղակայությամբ նույնպես չի համապատասխանում ստանդարտին, «QR» կոդի տեղակայությունը նույնպես չի համապատասխանում ներկայացված ստանդարտին, հոլոգրամայի վերին ազատ եզրը «AM»-ի մակարդակից ավելի բարձր է, որը նույն պես չի համապատասխանում ստանդարտին:

Հաշվառման համարանիշում առկա թվերի և տառերի ուռուցիկությունը (բարձրությունը) ընդհանուր մակերեսից կազմում են 1,4մմ:

Փորձագետ՝ ***Հ.Սիմոնյան***

5. Փորձաքննությանը ներկայացված «37 PH 599» և «803 AC» գրառումներով հաշվառման համարանիշների վրա առկա հոլոգրամաները իրենց չափսային առանձնահատկություններով, պատկերների և միկրոտպագրությունների տեղակայումներով, տարբեր գուներանգային փոփոխություններով համապատասխանում են «Հավելված 1»-ում առկա համապատասխան տվյալների հետ:

Թաքնված «OK» տեքստի և մոխրագույն երևացող հատվածում «OK» պատկերի հետազոտություն չի կատարվել «DyunaKey Filter» սարքի և «Հավելված 1»-ում նշված հատուկ լազերային սարքի բացակայության պատճառով:

Հոլոգրամաների վրա առկա միկրոտպագրությունների չափումներ չեն կատարվել, համապատասխան միկրոնային չափիչների բացակայության պատճառով:

Փորձագետ՝ ***Ա.Բաղդասարյան***

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

2026թ. եզրակացություն №26-0012 Բ

ՀԵՏՔԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

նկ.№1

նկ.№2

նկ.№3



նկ.№4

նկ.№5

նկ.№6

ՀՀ ԳՊՆ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻՆ-ՕՊԱՐԿՈՒ» ՓԲՄԿ



նկ.№7



նկ.№8



Նկար Ա. 1 – Տեսակ 1

նկ.№9



նկ.№11



նկ.№12

ՀՀ ՊՈԱԿ «ՓՈՐՁԱՓԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎԶԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

նկ.№13

նկ.№14



նկ.№15

նկ.№16



Նկար Ա. 2 – Տեսակ 1. 1

նկ.№17

ՀՀ ՊՄՊ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԳԱՅԻՆ ԲԱԺՆԻՆ» ՓԲԿ



նկ.№18



նկ.№19

նկ.№20

նկ.№21

նկ.№22



նկ.№23

ՀՀ ԳՈՒՄ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈՍԿ

Նկար Ա. 14 – Տեսակ 9

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Չափերը՝ ըստ նկար Ա. 3-ի:

նկ.№24



Նկար Ա. 3 – Տեսակ 2

նկ.№25

նկ.№26



նկ.№27

Փորձագետ՝ **Հ.Սիմոնյան**

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի N 228-Ն հրամանի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<< 21>> հունվար 2026 թ.

Պայմանագրի անվանումը՝ Ծառայությունների մատուցման պայմանագիր N 26-0012Պ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<08>> 01 2026 թ.

Պայմանագրի համարը՝ Ծառայությունների մատուցման պայմանագիր N 26-0012Պ

Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն

Պայմանագրի կողմի անվանումը՝ ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ մատակարարումները.

N	Մատակարարված ապրանքներ					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի
1	09-նյութական փորձաքննություն 09-02	09-նյութական փորձաքննություն 09-02	1	1	Ըստ պայ-մանագրի	08.01.2026թ. 14.01.2026թ.

Նշումներ հանրային հսկողություն իրականացնող անձի կողմից ներկայացված դրական դիրքորոշման վերաբերյալ՝

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Անհամապատասխանությունները բացակայում են:

Հիմք ընդունելով վերոգրյալը , տալիս եմ **դրական** եզրակացություն
(դրական/բացասական)

Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Վ. Մալաքյան
(անուն-ազգանուն, ստորագրություն)

<< 21>> հունվար 2026 թ.

Հավելված թիվ 3.1
Ծառայությունների կատարման մասին «08» «01» 2026թ.-ին
կնքված թիվ 26-0012Պ պայմանագրի

ԱԿՏ N 1

ծառայությունը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Վաճառող) Ներքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ Գնորդ) 2026թ.-ի հունվարի 14-ին հանձնման-ընդունման նպատակով հանձնեց ստորև նշված ծառայությունը (թիվ 26-0012Պ եզրակացություն).

Ծառայության				
Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի	չափման միավորը	քանակը (փաստացի)
Նյութագիտական փորձաքննություն (09-02)	ըստ պայմանագրի	հունվար	հատ	1
Նյութագիտական փորձաքննություն (09-04)				3
Հետքաբանական փորձաքննություն (06-03)				2
Փաստաթղթաբանական փորձաքննություն (03-01)				2

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Հ. Մ[illegible]
անուն, ազգանուն

ստորագրություն

Ընդունեց

[illegible]
անուն, ազգանուն

ստորագրություն

[1] Դուրս գրման ամսաթիվ		
14	Հունվար	2026 թ.
[4] Մատակարարման ամսաթիվ		
14	Հունվար	2026 թ.

Հարկային հաշիվ

(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[2] Սերիա	[3] Համար
A	0798316086
Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	8 Հունվար, 2026 թ.	26-0012Պ

[7] Լրացուցիչ տվյալներ

Համաձայն պայմանագրի

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի տվյալներ

[8] Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	0 1 8 3 6 5 2 5
[9] Անվանում	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՓՈՐՁ ԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար	0 1 8 3 6 5 2 5 / 1
[11] Բանկի անվանում	Երևանի թիվ 1 ՏԳԲ — Հաշվեհամար 900018005588
[12] Գտնվելու վայր (հասցե)	ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ ԻՍԱԿՈՎԻ 24
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի տվյալներ

[14] Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) (անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար, ՀԾՀ)	0 2 8 8 2 9 1 3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար			
[16] Անվանում	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ		
[17] Բանկի անվանում		Հաշվեհամար	
[18] Գտնվելու վայր (հասցե)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. 130		
[19] Լրացուցիչ տվյալներ			
[20] Ում միջոցով	**Անուն, ազգանուն**		
	Լիազորագիր	**Համար**	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ										
N	Ծառայության (աշխատանքի) անվանում (բովանդակություն)	Չափման միավոր	Ընդհանուր ծավալ (ժամանակ աշխ.)	Միավորի գին	Զեղչ (%)	Արժեք	ԱՄՀ դրույքաչափ (%)	ԱՄՀ գումար	Գործարքի տեսակ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	09. Նյութագիտական փորձաքննություն 09-02	հատ	1	60,000		60,000	20	12,000		72,000
2	09. Նյութագիտական փորձաքննություն 09-04	հատ	3	30,000		90,000	20	18,000		108,000
3	06. Հետքաբանական փորձաքննություն 06-03	հատ	2	60,000		120,000	20	24,000		144,000
4	03. Փաստաթղթաբանական փորձաքննություն 03-01	հատ	2	60,000		120,000	20	24,000		144,000
Ընդամենը						390,000	X	78,000	X	468,000

Առաքող՝ BAGHDASARYAN NAREK 2203930810

ստորագրությունը (անունը, ազգանունը)

14/01/2026 14:53:01

Ստացող՝

ստորագրությունը (անունը, ազգանունը)